



ՈՒՍՈՒՑՈՒՅԻՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԱՏՈՒԳՈՒՄ

2023

ՔԻՄԻԱ

ԹԵՍ 3

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ

ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՝ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ
առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք
դրան անդրադառնալ ավելի ուշ:

**Թեսությունից հետո դատարկ մասերը կարող եք օգտագործել սեփական
համար:**

1 Միևնույն արտաքին պայմաններում (ձնշում, ջերմաստիճան) հավասար բանակներով ազոտի(I) օքսիդ և պրոպան գազային նյութերի ո՞ր ֆիզիկական մեծությունների թվային արժեքներն են հավասար.

- w) ծավալ
- p) մոլեկուլների թիվ
- q) ատոմների թիվ
- r) հարաբերական խտությունն ըստ օդի
- t) պրոտոնների թիվ
- s) զանգված

Ո՞րն է ճիշտ պատասխանների շարքը.

- 1) w, q, q
- 2) q, r, t
- 3) w, q, r, s
- 4) w, p, r, s

2 Քանի՞ պրոտոն է առկա MnO_4^{2-} իոնում.

- 1) 87
- 2) 59
- 3) 57
- 4) 56

3 - 4. Ո՞րն է հավասար թվով կեկտրոններ պարունակող He, Ne, O₂, SO₂ բանաձևերն ունեցող գազերի՝

3 ծավալների հարաբերությունը համապատասխանաբար.

- 1) 80 : 16 : 10 : 5
- 2) 5 : 10 : 16 : 40
- 3) 16 : 8 : 5 : 1
- 4) 1 : 5 : 8 : 16

4 զանգվածների հարաբերությունը համապատասխանաբար.

- 1) 16 : 8 : 5 : 1
- 2) 2 : 5 : 8 : 16
- 3) 1 : 5 : 8 : 16
- 4) 1 : 1 : 1 : 1

5

Հետևյալ նյութերից որո՞նք են շիկացնելիս քայքայվում առանց պինդ մնացորդ առաջացնելու. *a) NH_4NO_2 , b) $(NH_4)_2Cr_2O_7$, c) $(NH_4)_2CO_3$, d) PH_4I*

- 1) a, c, d
- 2) a, b, c
- 3) a, b, d
- 4) b, c, d

6

Ի՞նչ տեղի կունենա պղնձի և խիտ ծծմբական թթվի փոխազդեցությունից առաջացած զազային արգասիքը բրոմաջրով անցկացնելիս.

- 1) Կանցատվի H_2S , որը կգունազրկի բրոմաջուրը:
- 2) Կանցատվի H_2 , որը չի գունազրկի բրոմաջուրը:
- 3) Կանցատվի SO_2 , որը կգունազրկի բրոմաջուրը:
- 4) Կանցատվի SO_2 , որը չի գունազրկի բրոմաջուրը:

7


Ա զազի խտությունն ըստ B զազի 3,2 է, իսկ B զազի խտությունն ըստ D զազի՝ 1,25 է: Ո՞ր զույգ են ներառված A և D զազերի անվանումները.

- 1) ծծմբի(IV) օքսիդ և մեթան
- 2) թթվածին և ջրածին
- 3) ածխածնի(IV) օքսիդ և ածխածնի(II) օքսիդ
- 4) նեռն և հելիում

8

Ա նյութի 30 գ նմուշը 100 °C պայմաններում լուծել են 100 գ ջրում և թողել սառչի: Ջրում A նյութի լուծելիության կախվածությունը ջերմաստիճանից ($\text{g}/100\text{g}$ ջուր)

գրաֆիկորեն բերված է ստորև:




Ո՞ր ջերմաստիճանում լուծույթը կդառնա հագեցած.

- 1) 50
- 2) 70
- 3) 10
- 4) 30

9

Ստորև բերված գրաֆիկներից ո՞րն է ճիշտ արտահայտում հաստատուն ճնշման պայմաններում չափված իդեալական գազի ծավալի կախվածությունը ջերմաստիճանից.




10

Զրում չլուծվող A նյութ պարունակող փորձանոթին B նյութի ջրային լուծույթ ավելացնելիս A նյութը լուծվեց և միաժամանակ անջատվեց անդուր հոտով, անզույն գազ: Նյութերի հետևյալ շարքից՝ 1) CuS 2) ZnS 3) HCl 4) $BaCO_3$ 5) H_2SiO_3 որո՞նք կարող են լինել A և B նյութերը համապատասխանաբար.

- 1) 2 և 4
- 2) 1 և 5
- 3) 4 և 3
- 4) 2 և 3

11

Զրի վիճակի դիագրամը ցույց է տալիս պինդ, հեղուկ և գազային վիճակներում ջուր նյութի գտնվելու տիրույթները՝ ճնշումից և ջերմաստիճանից կախված:



Ո՞ր կորերն են բնութագրում ջրի պնդացում \longleftrightarrow հալում,
գոլորշիացում \longleftrightarrow հեղուկացում վիճակների անցումները
համապատասխանաբար.

- 1) OB, OA
- 2) OA, OB
- 3) OA, OC
- 4) OC, OB

(12-13) Տարրի էլեկտրոնային թաղանթում առկա բոլոր էլեկտրոնները բաժանվում են երկու խմբի՝ ներքին (ոչ վալենտային) և վալենտային:

12

Քանի՞ վալենտային, քանի՞ չզույգված և քանի՞ ներքին էլեկտրոն ունի ծծմբի ատոմի հիմնական վիճակում համապատասխանաբար.

- 1) 6, 2, 10
- 2) 6, 2, 16
- 3) 2, 6, 16
- 4) 4, 2, 10

13

Որոշ տարրերի մեկական ատոմներում առկա են 10-ական ներքին և մեկական չզույգված վալենտային էլեկտրոններ: Ո՞նք է այդ տարրերի կարգաթվերի գումարը.

- 1) 28
- 2) 41
- 3) 24
- 4) 30


14

Հստ զանգվածի 9 % նատրիումի քլորիդ պարունակող քանի[°] զրամ լուծույթ
(ρ = 1գ/մլ) է անհրաժեշտ ավելացնել 90 մլ ջրին ֆիզիոլոգիական լուծույթ
ստանալու համար, եթե վերջինում ω(NaCl) = 0, 9 %.

- 1) 10
- 2) 9,5
- 3) 8,5
- 4) 11

15

Օրսիդացման-վերականգնման ռեակցիաները հնարավոր է հավասարեցնել նաև
ըստ զանգվածի պահպանման օրենքի, տարբեր գործակիցների միջոցով, սակայն
դրանք կարող են համարվել ոչ ճիշտ: Օրինակ.



Բերվածներից ո՞րն (որո՞նք) է(են) ճիշտ.

- 1) բ
- 2) ա, բ, դ
- 3) ա, բ, զ, դ
- 4) բ, զ

16

Գազի վերամբարձ ուժն օդում որոշվում է որոշակի ծավալով տվյալ գազի և նույն
ծավալով օդի զանգվածների տարբերությամբ:
Հելիումի վերամբարձ ուժը քանի[°] անգամ է մեծ կամ փոքր ջրածնի վերամբարձ ուժից.

- 1) մեծ 1,08 անգամ
- 2) փոքր 1,08 անգամ
- 3) մեծ 2,0 անգամ
- 4) փոքր 2,0 անգամ


17 Անագապատված երկարի վնասված մակերևույթը ծովի ջրում ենթարկվում է կերամաշման: Որքա՞ն է կերամաշման առաջնային փուլում տեղի ունեցող ռեակցիայի մոլեկուլային հավասարման քանակաչափական գործակիցների գումար.

- 1) 11
- 2) 6
- 3) 7
- 4) 3

18 Ո՞ր շարք են ներառված հետևյալ փոխարկումներն իրականացնելու համար անհրաժեշտ նյութերի բանաձևերը համապատասխանաբար.
 $N^0 \rightarrow N^{+2}$, $N^{+4} \rightarrow N^{+5}$, $N^{+3} \rightarrow N^{+2}$, $N^{+5} \rightarrow N^{+2}$, $N^0 \rightarrow N^{-3}$

- 1) O_2 , O_3 , $C_6H_5NO_2$, Ca , H_2
- 2) O_2 , O_2 , H_2O_2 , Ca , H_2
- 3) O_2 , O_3 , KI , Ag , Li
- 4) O_2 , O_2 , I_2 , Cu , H_2

19 Զրային լուծույթում ո՞ր նյութերի փոխազդեցությամբ է պայմանավորված նշված ռեակցիայի ուրվագրի աջ մասը.



- 1) մագնեզիումի քլորիդ և ամոնիումի սուլֆատ
- 2) մագնեզիումի հիպոքլորիդ և ամոնիումի սուլֆիդ
- 3) մագնեզիումի քլորիդ և ամոնիումի սուլֆիտ
- 4) մագնեզիումի քլորիդ և ամոնիումի սուլֆիդ

20 Որքա՞ն է մեկ էթիլ ռադիկալ պարունակող պարզագույն ալկենի մոլեկուլում երկրորդային ածխածնի ատոմների թիվը.

- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2


21 Ո՞ր շարքում է բերված հետևյալ՝ $\text{CH}_3 - \text{C} \equiv \text{C} - \text{CH}_2 - \text{CH} = \text{CH} - \text{CHO}$ միացության մեջ ածխածնի ատոմների հիբրիդացման ձևը հաջորդականությունը.

- 1) $\text{sp}^3, \text{sp}^3, \text{sp}, \text{sp}^3, \text{sp}, \text{sp}, \text{sp}$
- 2) $\text{sp}^3, \text{sp}, \text{sp}, \text{sp}^2, \text{sp}^2, \text{sp}^2, \text{sp}^2$
- 3) $\text{sp}^3, \text{sp}, \text{sp}, \text{sp}^2, \text{sp}^2, \text{sp}^2, \text{sp}$
- 4) $\text{sp}^3, \text{sp}, \text{sp}, \text{sp}^3, \text{sp}^2, \text{sp}^2, \text{sp}^2$

22 Մեկ մոլ քանակությամբ A արոմատիկ ածխաջրածինն այրելիս ստացվել է 10 մոլ ածխաթթու գազ: Նույն քանակությամբ նույն ածխաջրածինը կալիումի պերմանգանատի թթվեցրած լուծույթով օքսիդացնելիս ստացվել է 1 մոլ ածխաթթու գազ: Հետևյալներից ո՞րը կարող է լինել A արոմատիկ ածխաջրածինը.

- 1) 1,4-երկեթիլբենզոլ
- 2) 1,2,3,4-քառամեթիլբենզոլ
- 3) 1-մեթիլ 3-իզոպրոպիլ բենզոլ
- 4) 1,2- երկմեթիլ-4-եթիլբենզոլ

23 Οրքա՞ն է B և D նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը.



- 1) 200
- 2) 214
- 3) 262
- 4) 246

(24-25). Միաբրումալկանի մոլեկուլում բրոմի զանգվածային բաժինը 52,98 % է:

24 Որքա՞ն է բրոմի զանգվածային բաժինը (%) նույն ալկանի երկբրումածանցյալի մոլեկուլում.

- 1) 69,57
- 2) 69,99
- 3) 62,98
- 4) 72,56

25 Որքա՞ն է նույն թվով ածխածնի ատոմ պարունակող, չճյուղավորված իզոմեր ալկաղիենային ածխաջրածինների թիվը (ներառյալ տարածական իզոմերիան).

- 1) 5
- 2) 6
- 3) 3
- 4) 4

26 Դյումայի եղանակով ստացել են մեթիլպրոպան: Որքա՞ն է հնարավոր իզոմեր ելանյութերի մեկական մոլեկուլներում մեթիլ- խմբերի գումարային թիվը.

- 1) 4
- 2) 5
- 3) 2
- 4) 3

27 Համապատասխան պայմաններում մեթիլորիդի, եթիլորիդի և բավարար քանակով մետաղական նատրիումի փոխազդեցությունից ստացվել է ալկանների հավասարամոլային խառնուրդ: Որքա՞ն է մեծ մոլային զանգվածով ալկանի մոլային բաժինը և փոքր մոլային զանգվածով ալկանի զանգվածային բաժինը ալկանների խառնուրդում համապատասխանաբար.

- 1) 0,66 0,33
- 2) 0,33 0,2273
- 3) 0,50 0,3409
- 4) 0,33 0,66

28

Ի՞նչ մեխանիզմով են ընթանում էթենի քրոմացման և երկարի(III) քլորիդի կատալիտիկ ազդեցությամբ բենզոլի քլորացման ռեակցիաները համապատասխանաբար.

- 1) Էլեկտրաֆիլ միացում և էլեկտրաֆիլ տեղակալում
- 2) Նուկլեոֆիլ տեղակալում և ռադիկալային միացում
- 3) Ռադիկալային միացում և նուկլեոֆիլ տեղակալում
- 4) Նուկլեոֆիլ միացում և էլեկտրաֆիլ տեղակալում

29

Ո՞ր ռեակցիանների արդյունքում է առաջացած օրգանական արգասիքի զանգվածը հավասար էլանյութերի զանգվածների գումարին.


- 1) Էսթերացման
- 2) Առաջացման
- 3) Առաջացման
- 4) Վյուրցի ռեակցիայի
- 5) Հիդրուման
- 6) Դյումայի ռեակցիայի

Ո՞րն է ճիշտ պատասխանների շարքը.

- 1) 3, 5
- 2) 2, 4, 6
- 3) 1, 2, 3
- 4) 2, 5

30

Հայտնի պոլիմերներից մեկը ստացվում է ըստ հետևյալ ուրվագրի՝



Ինչպես է կոչվում X_4 պոլիմերը.

- 1) Պոլիամիդ
- 2) Պոլիստիրոլ
- 3) Լառուշուկ
- 4) Լապրոն

31

Համապատասխանեցրեք դարձելի ռեակցիաների հավասարումները՝ դրանք դեպի աջ տեղաշարժելու պայմանների հետ.

Ռեակցիաների հավասարումներ

- ա) $2AB(q) \rightleftharpoons 2A(\text{պ}) + B_2(q) - Q$
- բ) $AB_2(q) \rightleftharpoons A(\text{պ}) + B_2(q) - Q$
- շ) $2A(\text{պ}) + B(\text{պ}) \rightleftharpoons A_2B(\text{պ}) + Q$
- դ) $AB(\text{պ}) + B_2E(\text{պ}) \rightleftharpoons ABE(\text{պ}) + B_2(\text{պ}) + Q$
- է) $2AB_3(q) \rightleftharpoons 2A(\text{պ}) + 3B_2(q) - Q$
- զ) $A_2(\text{պ}) + 3B_2(\text{պ}) \rightleftharpoons 2AB_3(\text{պ}) + Q$

Աջ տեղաշարժելու պայմաններ

- 1) ջերմաստիճանի բարձրացում և ձնշման բարձրացում
- 2) ջերմաստիճանի բարձրացում և ձնշման իջեցում
- 3) ջերմաստիճանի իջեցում և ձնշման բարձրացում
- 4) ջերմաստիճանի իջեցում և ձնշման իջեցում

32

Համապատասխանեցնել H_3PO_4 և H_3PO_3 բաղադրությամբ թթուների և դրանց որոշ աղերի բնութագրերը երկրորդ սյունակի հնարավոր պատասխանների հետ.

Բնութագիր

Հնարավոր պատասխան

- ա) H_3PO_4 և H_3PO_3 եռահիմն թթուներ են
- բ) ֆոսֆորի վալենտականությունը թթուներում 5 է
- շ) Na_3PO_4 -ը և Na_2HPO_3 -ը թթվային աղեր են
- դ) H_3PO_4 և H_3PO_3 երկիհիմն թթուներ են
- է) Na_3PO_4 -ը և Na_2HPO_3 -ը չեղոք աղեր են
- զ) H_3PO_4 և H_3PO_3 թթուներն ուժեղ էլեկտրոլիտներ են

33 RO₃ բանաձևով օքսիդի 175 գ նմուշում R տարրի զանգվածը 7 գրամով մեծ է թթվածին տարրի զանգվածից:

Պատասխանում R տարրի վերաբերյալ հետևյալ հարցերի (ա, բ, գ, դ, ե, զ) պատասխանների թվային արժեքներով ձևավորված վեցանիշ թիվն է.

ա) Ω ՞ն է R տարրի պարբերության համարը:

բ) Ω ՞ն է R տարրի ատոմի արտաքին էլեկտրոնային շերտում առկա էլեկտրոնների թիվը:

գ) Ω ՞ն է տարրերի պարբերական համակարգում R տարրի խմբի համարը:


դ) Ω ՞ն է R տարրի հետ նույն խմբում և երկրորդ պարբերությունում գտնվող տարրի ատոմի էլեկտրոնային թաղանթում առկա էլեկտրոնների թիվը:

ե) Ω ՞ն է R տարրի հետ նույն խմբում և երրորդ պարբերությունում գտնվող տարրի ջրածնային միացության մեկ մոլեկուլում քիմիական կապերի թիվը:

զ) Ω ՞ն է R տարրի ցածրագույն օքսիդացման աստիճանը:

34 Փակ անորում ընթացող ռեակցիայի հավասարումն է.

$A_{(q)} + F_{(q)} = 3F_{(q)} + T_{(q)}$, իսկ F նյութի կոնցենտրացիայի կախվածությունը ժամանակից բերված է ստորև՝ գրաֆիկի ձևով.




Հետևյալ պնդումներից ո՞րն(որո՞նք) է(են) ճիշտ տվյալ ռեակցիայի համար.

- 1) F նյութի կոնցենտրացիան ժամանակի t_1 պահին փոքր է, քան t_2 պահին:
- 2) A նյութի կոնցենտրացիան ժամանակի ընթացքում փոքրանում է:
- 3) Գ նյութի առաջացման արագությունը 2 անգամ զերազանցում է U նյութի ծախսի արագությունը:
- 4) Գ նյութի առաջացման արագությունը 3 անգամ զերազանցում է F նյութի ծախսի արագությունը:
- 5) T նյութի կոնցենտրացիան ժամանակի ընթացքում մեծանում է:
- 6) Գ նյութի առաջացման արագությունը 3 անգամ զերազանցում է T նյութի առաջացման արագությունը:
- 7) Գ նյութի առաջացման արագությունը 2 անգամ զերազանցում է T նյութի առաջացման արագությունը:

Պատասխանը ներկայացնել ճիշտ համարների աճման կարգով:

35

Հետևյալ թթվահիմնային տիտրման կորի վերաբերյալ ո՞ր պնդումներն են ճիշտ.



- 1) Այն համապատասխանում է ուժեղ թթվի տիտրմանը ուժեղ հիմքով:
- 2) Այն համապատասխանում է թույլ թթվի տիտրմանը ուժեղ հիմքով:
- 3) Այն համապատասխանում է ուժեղ հիմքի տիտրմանը ուժեղ թթվով:
- 4) Այն համապատասխանում է թույլ հիմքի տիտրմանը ուժեղ թթվով:
- 5) Համարժեքային կետում $pH=7$ և համապատասխանում է լակմուսի գույնի անցման տիրույթին:
- 6) Գործնականում որպես հայտանյութ կիրառում են և՝ լակմուս, և՝ ֆենոլֆտալեին, և՝ մեթիլնարնջագույն:
- 7) Տիտրող լուծույթի 10 մլ ծախսի դեպքում ծախսվել է տիտրվող նյութի կեսը:
- 8) Համարժեքային կետում կստացվի երեք անօրգանական նյութերի լուծույթ:

Պատասխանում տալ ճիշտ պնդումներին համապատասխանող համարները՝ աճման կարգով:


36

Ի՞նչ փոփոխություններ տեղի կունենան որոշակի քանակով ամոնիակ պարունակող փակ անթում այն տաքացնելիս: Որպես պատասխան ներկայացնել ճիշտ պնդումների համարները աճման կարգով

- 1) Առումների թիվը չի փոփոխվի:
- 2) Մոլեկուլների թիվը կմեծանա:
- 3) Զանգվածը չի փոփոխվի:
- 4) Ճնշումը չի փոփոխվի:
- 5) Ճնշումը կմեծանա:
- 6) Զանգվածը կրկնակի կպակասի:
- 7) Կովալենտային կապերի թիվը չի փոփոխվի:
- 8) Սիզմա կապերի թիվը կփոքրանա:

37 Իզոմեր բութինների 1 մոլ խառնուրդն արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով անցկացնելիս առաջացել է $2,74512 \cdot 10^{25}$ թվով պրոտոններ պարունակող նստվածք: Որքա՞ն է բութին-2-ի ծավալային բաժինը (%) իզոմեր բութինների ելային խառնուրդում:

38 Դէ 116-րդ տարրը՝ Lv (լիվերմորիում) 2000թ. ստացվել է Դուբնա քաղաքի միջուկային հետազոտությունների կենտրոնում Յուրի Շովհաննիսյանի ղեկավարությամբ, ըստ կալցիումի և կյուրիումի նշված իզոտոպների միջև տեղի ունեցող միջուկային ռեակցիայի հետևյալ ուրվագրի.



Որքա՞ն է X մասնիկի զանգվածը (q.ա.մ.):

39 Տրված է $[\text{Co}(\text{NH}_3)_3\text{H}_2\text{OCl}_2]\text{NO}_3$ բանաձևին ունեցող կոմպլեքսային միացություն: Որպես պատասխան ներկայացնել այդ միացությունում կոբալտ իոնի լիցքը (միայն թվային արժեքը) և կոռորդինացիոն թիվը համապատասխան հերթականությամբ:

(40-41). Համապատասխան պայմաններում 0,1 - ական մոլ նյութաքանակով զիցինի, սերինի և ցիստեհինի քանակական փոխազդեցությունից ստացվել է $3 : 2$ մոլային հարաբերությամբ երկպեպտիդների և եռապեպտիդների խառնուրդ ու ջուր:

40 *Որքա՞ն է ստացված զրի զանգվածը (մգ):*

41 *Որքա՞ն է եռապեպտիդների գումարային նյութաքանակը (մմոլ):*

(42-43). Անհրաժեշտ է քայլայել կալցիումի կարբոնատ, կիրառելով ացետիլենի և մեթանի 22 գ/մոլ միջին մոլային զանգված ունեցող խառնուրդի այրումից ստացված ջերմությունը. $Q_{քայլ.}(CaCO_3) = -177,5 \text{ կ}{{\mathcal Q}}/\text{մոլ}$, $Q_{քայլ.}(C_2H_2) = 1300 \text{ կ}{{\mathcal Q}}/\text{մոլ}$, $Q_{քայլ.}(CH_4) = 890 \text{ կ}{{\mathcal Q}}/\text{մոլ}$:

42

Ի՞նչ ծավալով (լ, ն.պ.) զազային խառնուրդ է անհրաժեշտ այրել 3,2 կգ կալցիումի կարբոնատը քայլայելու համար (կորուստներն անտեսել):

43

Ի՞նչ նյութաքանակով (մոլ) կալցիումի կարբոնատ է հնարավոր քայլայել 35 լ (ն.պ.) զազային խառնուրդ այրելիս ստացված ջերմության հաշվին:

(44-45). Նույն մետաղից պատրաստված և նույն զանգվածն ունեցող երկու թիթեղներ ընկումել են. առաջին թիթեղը կապարի (II) արի, իսկ երկրորդը՝ պղնձի (II) արի նույն կոնցենտրացիա և ծավալ ունեցող լուծույթների մեջ: Ռեակցիաներն ավարտվելուց հետո առաջին թիթեղի զանգվածն ավելացել է 19 %-ով, իսկ երկրորդ թիթեղի զանգվածը պակասել է 9,6 %-ով:

44

Ո՞րն է նշված մետաղի կարգաթիվը, եթե միացություններում այն ցուցաբերում է +2օքսիդացման աստիճան:

45

Ի՞նչ զանգվածով (մգ) պղինձ է անջատվել երկրորդ թիթեղի վրա:

(46-47). 0,9 մոլ քլորաջրածին պարունակող 197,1 գ ջրային լուծույթին որոշակի զանգվածով արծաթի ացետիլենիդ ավելացնելիս անջատվել է 4,48 լ (ն.պ.) ացետիլեն և սպիտակ, լոռանման նստվածք:


46

Որքա՞ն է քլորաջրածնի զանգվածային բաժինը (%) մնացած լուծույթում:

47

Քանի՞ զրամ քլորոպրեն է հնարավոր ստանալ 44,8 մ³ ացետիլենից, կորուստներն անտեսելու դեպքում:

(48-49). Ըստ հետևյալ ուրվագրի՝



48 Որքա՞ն կլինի X և Y զագերի խառնուրդի միջին մոլային զանգվածը ($q/\text{մոլ}$), ուսակցիաների քանակական ելքի դեպքում:

49 Որքա՞ն կլինի օրգանական ելանյութի ծախսը (q), եթե X և Y զագերի զանգվածների տարբերությունը լինի $21,5$ q :

(50-51). Երկու ռեակցիաներ 10 °C -ում ընթանում են 3 մոլ /լ.ժամ արագությամբ, իսկ 50 °C -ում ռեակցիաների արագությունների տարրերությունը 195 մոլ /լ.ժամ է:

50

Որքա՞ն է երկրորդ ռեակցիայի արագության զերմաստիճանային գործակցի թվային արժեքը, եթե առաջին ռեացիայի արագության զերմաստիճանային գործակցի թվային արժեքը 2 է:

51

Որքա՞ն կլինի առաջին ռեակցիայի արագությունը (մմոլ /լ.ր) 60 °C -ում:

(52-54). Տրված է կալիումի պերմանգանատի 31,6 % զանգվածային բաժնով ջրային լուծույթ: Այդ լուծույթի 35 գ նմուշը գունազրկելու համար ոքա մեջ մղել են պրոպեն:

52 Ոքա ՞ն է աղի մոլային բաժինը (%) տրված լուծույթում:

53 Ոքա ՞ն է ծախսված պրոպենի ծավալը (մլ, ն.պ.):

54 Ոքա ՞ն է վերականգման գործընթացին մասնակող էլեկտրոնների քանակը (մմոլ):

(55-57). Ծծմբական թթվի 80,25 % զանգվածային բաժնով 300 գ լուծույթ պատրաստելու համար ծծմբական թթվի 56 % զանգվածային բաժնով լուծույթը խառնել են 20 % զանգվածային բաժնով օլեումին:

55 Որքա՞ն է ծախսված օլեումի զանգվածը (q):

56 Ի՞նչ զանգվածով (q) $NaOH$ -ի 10 % զանգվածային բաժնով լուծույթ կպահանջվի 24,5 գ 20 % զանգվածային բաժնով օլեումը չեղոքացնելու համար:

57 Ի՞նչ զանգվածով (q) ծծմբի (VI) օքսիդ պետք է լուծել 300 գ 20 % զանգվածային բաժնով օլեումի մեջ 25% զանգվածային բաժնով օլեում ստանալու համար:

(58-60). Որոշակի զանգվածով պղնձե լարն ընկդմել են 30 % զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթի մեջ և որոշ ժամանակ անց հանել: Պարզվել է, լուծույթի զանգվածը փոփոխվել է 6,6 գրամով: Այնուհետև որոշ ժամանակով պղնձե լարն ընկդմել են 80 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթի մեջ, որի ընթացքում անջատվել է 1,96 լ (ն.պ.) գազ: Երրորդ անգամ լարն ընկդմել են արծաթի նիտրատի լուծույթի մեջ, որոշ ժամանակ անց հանել և կշռել են: Պարզվել է, որ լարի զանգվածը ելայինի համեմատ չի փոփոխվել:

58 Որքա՞ն է առաջին փորձի ընթացքում անջատված գազի ծավալը (մլ, ն.պ.):

59 Որքա՞ն է երկրորդ փորձի ընթացքում լուծույթի զանգվածի փոփոխությունը (q):

60 Որքա՞ն է երրորդ փորձի ընթացքում ծախսված աղի զանգվածը (q):